2:30 Զաղաքական լուրեր/արաբերէն  
2:45 Յունարեւ երգերու ունկնդրութիւն  
4:30 Զաղաքական լուրեր/ արաբերէն  
6:30 Զաղաքական լուրեր/ հայերէն  
8:00 «All that jazz» ձեզ երաժշտութեան տարբեր ժանրերու ընտիր կտորներու ունկնդրութիւն

### «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»-Ի ՎԱՂՈՒՄՆ 3ԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ

8:30 Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ արաբերէն  
9:30 Զաղաքական լուրեր/հայերէն  
10:00 Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարէն Ս. պատարագի ուղղակի ձայնասփռում  
12:30 Զաղաքական լուրեր/ հայերէն  
1:00 Ազգային-յեղափոխական երգեր  
2:30 Զաղաքական լուրեր/արաբերէն  
2:45 Յունարեւ երգերու ունկնդրութիւն  
4:30 Զաղաքական լուրեր/ արաբերէն  
6:30 Զաղաքական լուրեր/ հայերէն  
8:00 «All that jazz» ձեզ երաժշտութեան տարբեր ժանրերու ընտիր կտորներու ունկնդրութիւն

### ԱՇՆԱՆԱՅԻՆ ՆԱԽԱԳԱՀ

#### Ի ՆՊԱՍՏ ԹՈՂՆՈՅ ԲՈՅՆԻՆ

Կազմակերպութեամբ  
**ԹՈՂՆՈՅ ԲՈՅՆԻ ՏԻԿԱՆՆՑ 3ԱՆՉՆԱԽՈՒՄՔԻՆ**

Տեղի կ'ունենայ՝ Դիմազաբթի, 6 Նոյեմբեր 2003, առաւօտեան ժամը 9:30ին Թոյնոց Բոյնի սեղանատան մէջ:


Սեկնում՝ առաւօտեան ժամը 8:30ին, Պուրճ Դամուտ - Master Mall-էն եւ Անթիլիաս - Սիմիթեան շէնքերէն:  
Մուտք՝ ներառեալ երթեւեկ՝ 20,000 լ. ո.





# Գրական Էջ

## Varoujan



Հայ գրականության բացառիկ բանաստեղծներին մեկը չէր քառասուն օր առաջ այս անցաւոր աշխարհին իր վերջնական հրաժեշտը տուած Վարուժան անուն հանրածագօք արուեստագետը, հակառակ այն բացայայտ ճշմարտութեան, որ ամէն անգամ երբ արուեստաբանները իր անունը կ'արձանագրէին սպիտակ թուղթին վրայ, յաջորդող բառը կ'ըլլար *բանաստեղծ* գոյականը: Բառը կու գար ամենայն իրաւութեամբ եւ անգիր բանաստեղծութիւններու «յաւիտեական կարօտը», ընթերցուի աչքին գարմանահար կեդրոնացումին դիմաց, լայն կը բանար հորիզոնները լոյս ու ստուերի առիւրնող նախադասութիւններով բանուած այդ աշխարհներուն՝ իբրեւ գերգալուն հոգիի մը աչքին ընդմէջէն անհունացած մարմնաւորեալ բանաստեղծութիւններ:

Բանաստեղծ էր Վարուժան Ալեքան՝ բառին ամբողջական առումով եւ ամէն բանէ առաջ ու վերջ: Բանաստեղծ մը, որուն գրիչը սակայն դուրս կու գար բոլորովին տարբեր բանաբանէ, իր տաք, բաբախուն, գրաւիչ հոգիին թելադրանքներով ու խորհուրդներով հարստացած: Լուսանկարները կը յորդէին շրջանակներէն, ակնթարթի մը մէջ որսացուած տեսարանը կը մերկանար իր առարկայական իրականութենէն, կը դառնար լոյսի եւ ստուերի խաղերու մէջ խտացուած մարդկային հոգեվիճակ, ապրում ու թրթիռ, յոյզ ու երազ, երանգ ու խորհուրդ եւ արտաքնացած աներեւոյթին անտես թեւահարումներով ամբողջացող բանաստեղծական վիճակ:


Ծառը, ապառաժը, ամպը, ծաղիկը, ջուրը, նաւակը, թիթեռը կամ նոյնիսկ ծայր աստիճան սովորական կարծուող բնութեան մէկ մասնիկը կ'ամբողջանար նոր բովանդակութեամբ, կը տիպարայնանար, մարդկային շունչ ու հոգի կը ստանար եւ գեղեցկօրէն կը դառնար *տեսանելիին ա՛ն-տեսանելի* եռութիւնը բացայայտող յաներձական ճշմարտութիւն: Մէկ խօսքով՝ բանաստեղծութիւն:

Միայն հոգեկան այս անբացատրելի վերացումով կարելի է կարդալ Վարուժան Սեբեանի լուսանկար-բանաստեղծութիւնները: Գեղատիպ ու հաստափոր «Liban/Lebanon» ալպոմին էջերը կենդանացուցած վարուժանեան ստեղծումները եւ նման քանի մը հատոր լեցնելու պատրաստ հարիւր հարիւրաւոր մնացեալ գործերը արուեստագետին լաւագոյն ապացոյցն են այս անհերքելի ճշմարտութեան: Հապա գրողի մը ողջ եռութիւնը ձեռքի շարժումի մը, թափանցիկ նայուածքի մը, ալիք-ալիք շերտացող ժպիտի մը, խորախորհուրդ դիմաստուերի մը մէջ խտացուցած դիմանկարները:

Կարելի է արդեօք արտասանել «Վարուժան» անունը եւ անմիջապէս չլիջել Պարոյր Սեւակի ներքին ճշմարտութիւնը կենսագրած իր այնքան ծանօթ դիմանկարները: Ակնարկ մը նետել Մուշեղ Իշխանի քաղցրածպիտ պատկերին վրայ եւ չչեքմանալ լաւատեսութեան ու բարութեան անսպառ յատկանիշներով ազնուացած վաւերական գրողին ամբողջական ներկայութեամբ: Թեկուզ պահ մը կանգ առնել մասներու նուրբ հիւսուածքին մէջ իր ամբողջ հոգին ծրարած ժագ Ս. Յակոբեանի վարուժանագիր էանկարին առջեւ եւ չլիանալ երկնավեճիտ աչքերէն յորդող ժպիտին քրիստոնէաշունչ ազնուութեամբ: Սեւեռնել հայեացք մը բաց գիրքին դիմաց վեհացած Միխայիլ Նույնի խոհուն պատկերին եւ չտարուիլ իմաստասիրութեան բաց ծովուն մէջ ճամբորդելու անխուսափելի հրաւերներէն:

Վարուժանեան հրաւերներէն, որոնք գրեց լոյսով ու հոգով, սիրով ու երագով եւ քաղցրերանգ երագի մը պէս անցաւ այս աշխարհէն յիշողութեան ցուցասրահին մէջ կախելէ ետք իր անմոռանալի դիմանկարը:

Ս. ԿԻՐԱՎՈՍԵԱՆ



### ՄԵԾԱԳՈՅՆ ՀՐԱՇՔԸ

Բանաստեղծութիւնը քաղաքակրթական այն հոսքն է եւ յաւիտեական կարօտը, որ մեզ անդադար կը քաշէ հողի մը ուղղութեամբ, զոր չենք ճանչնար եւ իր ամբողջութեամբ դժուար թէ կարենանք ճանչնալ:

Խօսքը մարդկային կեանքի մեծագոյն հրաշքն է: Մարդ անով կ'արտայայտէ իր էութիւնը եւ անոր գորութեամբ մարդ էակը կը հասնի ճանաչումներու եւ ազատութեան ամէնէն հեռաւոր եւ նոյնիսկ աներեւակայի բարձունքներու: Բանը աշխարհներ կառուցելու եւ ուրիշ աշխարհներ ջնջելու կարողութիւնը ունի: Սակայն մարդիկ դեռ մանուկներ են եւ, դժբախտաբար, բառերու հետ կը խաղան ճիշդ ա՛յնպէս՝ ինչպէս մանուկները պուպրիկներուն հետ կը խաղան: Եւ եթէ մարդկութիւնը գիտակցէր այն հզոր ու թաքուն ուժին, զոր իր մէջ ունի բառը՝ գայն պիտի չանտեսէր, այլ անոր միջոցաւ պիտի որոնէր իր ամբողջական էութիւնը:

Աւելի՛ն. նման գիտակցութեան մը հասած մարդը Բանը պիտի որդեգրէր իբրեւ անփոխարինելի գէնք՝ զինք իր բոլոր վախերէն ազատագրելու եւ ամէնէն հեռաւոր թիրախները նուաճելու համոզումով: Իր էութեան ծանօթ մարդը չի կրնար անտեսել այս ճշմարիտ ճշմարտութիւնը, այսինքն՝ Բանին ամենազօր եւ անսպառ յատկութիւնները:

Կայ եւ բառը, որ մայրն է բոլոր բառերուն: Մարդ էակին ի վերուստ տրուած է այս բառին ծաւալը ընդարձակելու աստուածային կարողութիւնը, եւ ասիկա մինչեւ ա՛յն աստիճան, երբ եւ բառը իր մէջ կ'ընդգրկէ տիեզերքի տեսանելի եւ աներեւոյթ բոլոր մտածումները, զգացումներն ու խորհուրդները: Երբ կը հասնիս ինքնաճանաչումի այս մակարդակին՝ այն ատեն ամբողջական ու յարատեւ խաղաղութիւն մը կը հաստատուի էութեանդ եւ աներեւոյթ արժէքներուն ու խորհուրդներուն միջեւ, էութեանդ եւ նո՛յնիսկ տիեզերքի ամէնէն աննշան հիւլէին միջեւ:

ՄԻՍԱՅԻԼ ՆՈՒՍՅՄԷ



### ԵՍ ԶԱՒԱԿՆ ԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ես գաւակն եմ Հայաստանի,  
Որուն հոգին ւաւտածայն գանգի դօղանջ՝  
Կը թեւածէ եթերին մէջ,  
Որուն հաւատքն՝ աղօթակերպ գմբէթ ու խաչ՝  
Կ'ամբառնայ վեր, դէպի Սիրոյ արեւն անշէջ:


Ես գաւակն եմ Հայաստանի,  
Ուր արշաւեց նիւթին չարիքն ամէն վայրկեան՝  
Որպէս մարիկ աշխարհաւեր,  
Բայց ուր բարիքն օճախներու նուիրական  
Մնաց միշտ վառ եւ միշտ ծխաց դարերն ի վեր:

Ես գաւակն եմ Հայաստանի,  
Ուրտեղ ծնաւ ազատութեան երազն անմար,  
Եւ որուն դրօշն արիւնջը ալ  
Ծածանեցաւ կիրներու մէջ եւ սարէ սար  
Հերոսներու դիւցազնախաղ ուսին վրայ:

Ես գաւակն եմ Հայաստանի,  
Որ կը մնայ Աւետեաց նո՛ր աշխարհն անհաս  
Ու մեր ներկան տառապակէզ.  
Որուն անունն է առապել ու վառ երազ  
Սերունդներու կարօտամաշ հոգիէն ներս...

Ես գաւակն եմ Հայաստանի...:

ՍՈՒՇԵՂ ԻՇԽԱՆ



### ՅԱՒԵՐԺԻ ՃԱՄԲՈՐԴԸ

Այն արդար ցորենի արտն եմ ես, որ դարեր շարունակ տրորուել է օտար այրուձիբի սմբակներու տակ, այրուել հրդեհից ու երաշտից, եւ որից փրկուած մի բուռ ցորենը հասել է գալիքի ցանքին եւ շուրջ բերք է տալիս...

Խաղողի այն յամառ ու տոկուն ո՛րթն եմ ես, որի արմատները հասնում են մինչեւ Արմանի, Հայասա ու Նայիրի, իսկ պտուղն ու տերեւը՝ թարմանում են այսօրուան ցողից ու լցում - հասունանում վաղաքան արեւի շողից...

Ես՝ ինքը կեանքն եմ, յարատեւումը, անմահութիւնը...

Ես նա՛ եմ, ով միշտ մահուան մէջ է ապրել, բայց մահ չունի՛...

Ի՛նչ կարող էին ինձ անել իր անհամար դաժնիքները, երբ նրանք ընդամենը... սպաննել գիտէին ապրելու եւ յարատեւելու աստուածային գաղտնիքը...


Նրանց գէնքը տէգն ու եաթաղանն էր, իսկ իմը՝ մուրճն ու գրիչը... Իսկ ի՛նչ կարող է անել ամէնից զօրեղ տէգը՝ մուրճի առաջ, եւ ամենասուր եաթաղանը՝ գրիչի դէմ...

«Իմ երկիրն ա՛յն է, որ գտնուել է Բիբլիական Արարատ լեռան ստորոտում, առասպելական դրախտի տեղում, եւ որտեղ կեանքը դարերով դժոխքի էր նման...

Այն երկիրը, որը դարեր շարունակ պատերազմ ու աղէտ է ներմուծել եւ արտահանել՝ որը ու գաղթական, ներմուծել ոճիր ու խաւար՝ լո՛յս ու հանճար արտահանելով, եւ գազանութիւն ու բռնութիւն ներմուծելով՝ բարութիւն եւ ազատութեան տէ՛նչ արտահանել...

Հայաստանն եմ ես, հայ ժողովուրդն եմ ես՝ Յաւերժի Ճամբորդը, որը, դարերի խորքից եկած, դէպի գալիք դարե՛րն է գնում, եւ որի երթը վե՛րջ ու վախճա՛ն չունի՛, քանի դեռ գէթ մի հայ է ապրում այս հողագնդում, այս յաւերժական արեւի ներքոյ...

ԳԷՈՐԳ ԷՍԻՆ



### Ո՛Վ ՀԱՅ, ԽՕՍԷ ՀԱՅԵՐԷ՛Ն...

Ո՛վ Հայ, խօսէ հայերէ՛ն շէկ պարթօնքէ՛ր մինչեւ քուն  
Բազմութեան մէջ թէ մինակ, տան թէ ճամբուն շուկայի,  
Օտարին հետ ու եղբօրդ, իբրեւ յաղթե՛րք պանծալի՛  
Հպարտութեա՛ւք, բարձրաճա՛յն լոկ հայերէ՛ն խօսէ՛ դուն:

Կանաչ բակէն դպրոցի մինչեւ մահիճն յետնագոյն՝  
Խօսքը ըլլայ մի՛շտ հայերէն, պի մէն մի բառն հայրենի՛  
Օղակ մ'է՛ նոր ու հզօր որով տակաւ կ'երկարի  
Հայ լեզուի հին բայց անմաշ շղթան ոսկի եւ անհուն...

Բերանացի, գրաւոր, ու մտովի, հոգեւի՛ն՝  
Միշտ հայերէ՛ն խօսէ՛ դուն ի սէ՛ր մեր մեծ Անցեալին,  
Որ իր հողին տակ ննջող մեր ողջ նախնիքը ցնծան:

Թէ հա՛րկ ըլլայ Աստուծոյ հետ ալ խօսիլ անպայման,  
Հպարտօրէ՛ն, ոսկրէրովդ ու շրթներովդ հողածոյ  
Խօսէ՛ դարձեա՛լ հայերէն՝ այդ սուրբ լեզուն Աստուծոյ...

ԺԱԳ. Ս. ՅԱԿՈԲԵԱՆ

# ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՆԵՍՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻԶ

ՀԱՄԱՑԱՆՑ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ



## ՆԵՐՇԵՉԱՐԱՆ

### ՆՈՒԷՐԸ

Ոգեշնչող պայմանաժամերու եւ գրութիւններու նուիրում «Ռէյնդրոփ» (www.raindrop.org) կայքէն քաղելով ստորեւ բարգմանարար կը ներկայացնենք «Նուէրը» խորագրեալ դրուագը, որուն հեղինակը անծանօթ է:

\*\*\*

Երիտասարդ ուսանող մը շուտով պիտի աւարտէր համալսարանը: Ամիսներէ ի վեր ան «աչքը դրած» էր ինքնաշարժներու վաճառքի ցուցասրահի մը մէջ իր տեսած փարթաւ մէկ ինքնաշարժին վրայ եւ գիտնալով, որ իր հայրը կարողութիւնը ունէր գայն գնելու, անոր ըսած էր, թէ իր ուզածը ա՛յդ նուէրն է միայն: Մինչ վկայականաց բաշխման օրը կը մօտենար, երիտասարդը անհամբեր կը սպասէր դոյզն նշաններու, որոնք պիտի բացայայտէին, որ իր հայրը գնած էր արդէն իր ցանկացած նուէրը:

Վերջապէս, վկայականաց բաշխման օրը, առաւօտուն, հայրը զինք կանչեց իր գրասենեակը եւ ըսաւ, թէ որքան հպարտ էր նման գաւակ մը ունենալուն համար, աւելցնելով, որ թէ անսահման սեր կը տածէր իր նկատմամբ: Ապա իր տղուն յանձնեց գեղեցիկ ծրարով պատուած նուէրի տուփ... մը: Հետաքրքիր, եւ մասամբ յուսախաբ, երիտասարդը բացաւ տուփը... եւ այնտեղ գտաւ լաթակազմ Աստուածաշունչ մը, որուն վրայ ոսկեայ գիրերով արձանագրուած էր երիտասարդին անունը: Չայրացած երիտասարդը գոռաց իր հօր երեսն ի վեր «Այսքան դրամ ունիս եւ Աստուածաշունչ մը կը նուիրես ինձի», եւ դուրս վազեց սենեակէն:

Անցան տարիներ եւ երիտասարդը մեծ յաջողութիւններ արձանագրեց իր ասպարէզին մէջ: Ան նաեւ գնեց շքեղ տուն մը եւ ընտանիք կազմեց: Օր մը, գիտակցելով, թէ հայրը ծերացած է արդէն, որոշեց այցելութիւն մը տալ անոր: Վկայականաց բաշխման օրէն ի վեր չէր տեսած գայն: Տակաւին այցելութեան զատուրումները չէր կատարած, երբ լսեց, թէ հայրը մահացած էր եւ իր բոլոր հարստութիւնը՝ իրեն կտակած: Ան պէտք էր անմիջապէս վերադառնար հօրենական տուն եւ հարկ եղած կարգադրութիւնները կատարէր:

Երբ ան հասաւ հօրը տունը, յանկարծ տխրութեամբ եւ զղջումով համակուեցաւ իր սիրտը: Սկսաւ քննել իր հօր թուղթերը եւ այնտեղ գտաւ նաեւ Աստուածաշունչը, ճիշդ այն վիճակին մէջ, որ ձգած էր տարիներ առաջ: Արցունքոտ աչքերով բացաւ գայն եւ սկսաւ թերթատել անոր էջերը: Իր հայրը զգուշութեամբ ընդգծած էր Մատթէոսի աւետարանին 7րդ գլուխին 11րդ հատուածը, որ կ'ըսէ.


«Արդ, եթէ դուք, որ չար էք, գիտէք ձեր գաւակներուն լաւ պարգեւներ տալ, ձեր երկնաւոր հայրը որքա՛ն աւելի լաւ պարգեւներ պիտի տայ, անոնց, որոնք իրեն կը դիմեն»:

Մինչ կը կարդար այս տողերը, ինքնաշարժի բանալի մը ինկաւ գրքին մէջէն: Վրան գրուած էր անունը նոյն այն ցուցասրահին, որ վաճառքի դրած էր ատենօք իր ցանկացած ինքնաշարժը, իր շրջանաւարտութեան թուականը եւ «վճարուած» կնիքը...

Հայացուց  
ՆԱԶԻԿ ՄՈՒՐԱՏԵԱՆ

## ՀԷՔԸՐՆԵՐ ԿՐՆԱՐՆ ՀԱՄԱՑԱՆՑԸ ՎԱՐ ԱՌՆԵԼ

Եթէ կ'ուզես գիտաբերեալ կալիպան զիրք մը գրել այն օրուան մասին, երբ համացանցը փոփոխեց պատկերացումներդ, ապա պէտք է սկսիս համակարգիչի «խնայող» մը, որ զինուած է լեփոնփով եւ համացանցի հասողութիւն ունի: Ան կ'արձակէ արագօրէն տարածուող համակարգչային ժահր մը, որ քանի մը վայրկեաններու մէջ իրեն կու տայ կարելիութիւնը իր հակազիտին տակ առնելու միջոցաւ համակարգիչները: Ժահրով վարակուած համակարգիչներու այս «բանակ»ը իր կարգին կը յարձակի եւ նամակներու փոխանակման եւ համացանցի կարեւորագոյն սրբավրէններուն վրայ՝ դանդաղեցնելով եւ ծանրաբեռնելով համացանցը: Յարձակումը ժամանակի ընթացքին աւելի փտանդաւոր կը դառնայ, օդակայաններու եւ ոստիկանատուններու հետաձայնային կապերը կը խանգարուին: Ելեկտրականութեան եւ հեռաձայնի ծառայութիւններու պատասխանատու համակարգիչներ կը վնասուին...



նապը ցոյց կու տան, թէ համացանցը աւելի խոցելի է, քան ինչ որ կը կարծուէր:

Քառս ստեղծելն ու տնտեսական վնաս հասցընելը շատ բանի չի կարօտիր: Բաւարար է, որ գոյութիւն ունենայ խանգարուած միտք մը, որ լատեղեցիկ է համացանցին եւ իր տրամադրութեան տակ ունի համակարգիչ մը, կը բացատրէ «Միմընդ» ընկերութեան ամենահարկաւորը:

Հնչ համացանցը: Նոյնիսկ առանց ուղեւորութեան, հեքըներ կրնան հետեւողական յարձակումներով քանի մը օրուան համար վար առնել համացանցը, ապա կրկնել յարձակումը...

Նման աղէտի մը հետեւանքները մեծ են: Մինչ ճարտարագէտներ կը նորոգեն վնասուած ցանցերը, կառավարութիւնները, կազմակերպութիւնները, ընկերութիւններ եւ անհատներ հարկադրուած են վերադառնալու թուղթի եւ մատիտի օրերուն:

Երբ հարցը կը վերաբերի համացանցի անփտանդութեան, քննադատութիւնները յաճախ «Մայքրոսոֆթ»-ին ուղղուած կ'ըլլան: «Ուլիտոյ» դրութիւնը այնպէս մը պատրաստուած է, որ եթէ հեքը մը կամ ժահր մը թափանցէ անոր մէջ, կրնայ անչափելի վնաս հասցնել», կը բացատրէ Բրիտանիոյ բաց համալսարանի համացանցի մասնագէտներէն Ճոն Նոթըն: «Եթէ ես «Քալիտա»-ի տեղը ըլլայի, բնաւ ժամանակ չէի կորսնցներ կորիզային ուղեւոր ձեռք ձգելու համար: Փոխարէնը՝ կը մասնակցէի «Մայքրոսոֆթ»-ի դրութիւններուն նուիրուած դասընթացներուն, կ'աւելցնէ ան:

«Մայքրոսոֆթ» կ'ըսէ, թէ ան տեւարար կ'աշխատի Օփերէյթիւնկ Սիսթըմները բարելաւելու ուղղութեամբ եւ անվտանգութեան մտահոգութիւններով է, որ մօտիկ ապագային հրապարակ պիտի իջնէ իր նորագոյն դրութիւնը՝ «Լոնկհորն»:


Բնականաբար, հարցը «Մայքրոսոֆթ»ով չ'աւարտիր: Համացանցի կառուցումն անոր փորձութիւնները ծրագրուած էին այն օրերուն, երբ սփեմի հասկացողութիւնը չկար, եւ համացանցը ազդեցական մակարդակներու վրայ կ'օգտագործուէր միայն: Այժմ, երբ ամբողջ աշխարհը կ'օգտագործէ գայն, օրէնքները պէտք է վերատեսուցեն եւ ներթափանցեն...

«ՆԻՈՒԶՈՒԻԲ»

## ՓՈՔՐԻԿՆԵՐԸ ԵՒ ՀԱՄԱՑԱՆՑԸ

Միացեալ Նահանգներու կրթութեան նախարարութեան վերջերս հրապարակած տուեալներուն համաձայն, 5 - 17 տարեկաններու 90 առ հարիւրը կ'օգտագործէ համակարգիչը, իսկ անոնց 59 առ հարիւրը՝ համացանցը:


Նոյնիսկ մանկապարտէզի փոքրիկներուն մօտ համակարգիչի եւ համացանցի օգտագործումը ան արձա-



նազրած է եւ շուրջ 20 առ հարիւրի համեմատութիւն մը կը պարզէ: Միեւնոյն ուսումնասիրութեան համաձայն, Միացեալ Նահանգներու դպրոցներուն 99 առ հարիւրը համացանցի հասողութեամբ օժտուած է, մինչ տակաւին ութ տարի առաջ այդ համեմատութիւնը 35



առ հարիւր էր միայն: «Փոքրիկները արհեստագիտական շատ մը նորութիւններ յաճախ առաջին որդեգրողներն են. անոնք այդ արհեստագիտութեամբ կը մեծնան եւ ոչ թէ չափահասներու նման հարկադրուած կ'ըլլան յարձակուելու նորութիւններուն», կը բացատրէ մասնագէտ մը աւելցընելով՝ «աշակերտները կը կազմեն համացանցի «բնակչութեան» մեծամասնութիւնը»:



Իրենց կեանքին առաջին 10 տարիներուն մասնակցեալներուն 60 առ հարիւրը կը գործածէ համացանցը: Այս համեմատութիւնը կը հասնի 80 առ հարիւրի, երբ 16 տարիքը նկատի առնուի:

Ուսումնասիրութեան համաձայն, ինչպէս չափահասներու, այդպէս ալ փոքրիկներու պարագային, համացանցի օգտագործումին պատճառները այլազան են: Անոնց երեք-չորրորդը համացանցը կ'օգտագործէ դպրոցական պարտականութիւններ կատարելու համար: Իսկ փոքրիկներուն 50 առ հարիւրը համացանցը կը գործածէ ե-նամակներ եւ էս. էմ. էս. պատգամներ ուղարկելու եւ խաղեր ըմբոշխնելու:

Փոքրիկ աղջիկներ, որոնք տակաւին քանի մը տարի առաջ տղաներէն նուազ համեմատութեամբ կը գործածէին համացանցը, արդէն ջնջած են այդ տարբերութիւնը:


## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ազգային առաջնորդարանը դիմումներ կ'ընդունի դիւստրիպիայի պաշտօնին համար: Թեկնածուն պարտի լրացնել հետեւեալ պայմանները.  
1.- Տիրապետել հայերէն եւ արաբերէն լեզուներուն եւ ծանօթ ըլլալ անգլերէնի կամ ֆրանսերէնի:  
2.- Ունենալ համալսարանական վկայական:  
3.- Ունենալ համապատասխան աշխատանքի լուրջ փորձառութիւն:  
Թեկնածուն կը պահանջուի՝ Ներկայացնել իր կենսագրականը (CV)՝ հետեւեալ հասցեին  
- Ազգային առաջնորդարան, Պոլսի Համուտ, Արաբ փողոց  
- կամ e-mail azkayin@inco.com.lb  
- Fax (01) 258305  
ԴԻՄԱՆ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

ԼՕՆԻ ԾՐՁԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿԱԿԱՆ ԶԱՆՉՆԱՍՈՒՄԲ  
**ԶՐՈՅՑ - ԴԱՍԱՆՍՈՒԹԻՒՆ**  
Տեղի կ'ունենայ ԼՕՆԻ «Արաբի Պոլիտիքալ» ընկերաբաշխական կեդրոնի «Թնձուկեան» սրահին մէջ, առաւօտեան ժամը 9:30ին:  
Սիր  
**«ԾՆՈՂԸ - ԶՄԻԿ - ԴՊՐՈՅ ՓՈՒ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ»**  
Ա. ՄԱՍ. 3ԷՆ 10 տարեկան երեխաներու համար՝ Երկուշաբթի, 3 Նոյեմբեր 2003  
Կը ներկայացնեն՝  
**ՀՈԳԵԱՆ՝ ԿԱՐԻՆ ԶՈՀՐԱՊԵԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺ՝ ԹԱԼԻՆ ԵԱՀՆԻԵԱՆ**  
Բ. ՄԱՍ. 11ԷՆ 18 տարեկան պատանիներու համար՝ Երկուշաբթի, 10 Նոյեմբեր 2003  
Կը ներկայացնեն՝  
**ՀՈԳԵԱՆ՝ ԿԱՐԻՆ ԶՈՀՐԱՊԵԱՆ ՏՆՕՐԵՆՈՒՀԻ՝ ՔՈՅՐ ԹԵՈՊԻՍԳԷ ՊԵՏՐՈՍԵԱՆ**  
ՀՐԱԲԵՐ  
**«ԱԶԳԱԿ»-Ի ՀԵՌԱԶՄԱՅԻՆ ԹԻԻԵՐԸ**  
«ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

# Մանկապատանեկան

## ԿԵՆՍԱՆԻԹԵՐԸ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆ



Կենսաճիւթերը շատ քիչ են քանակով, սակայն անոնք անհրաժեշտ են կենդանութիւնը եւ աշխուժութիւնը տալու համար:

Մենք շատ փոքր քանակներու կենսաճիւթի պէտք ունինք: օրական քանի մը հազարերորդ միլիկրամ կենսաճիւթ բաւարար է: Սակայն առանց անոնց մեր բոլոր կերածները անգործածելի կ'ըլլան, որովհետեւ մեր մարմինը գանոնք կը գործածէ կատարելու համար կեանքին անհրաժեշտ բոլոր քիմիական նյութերը:

գործարաններուն տոկոսն ունեւորող տուող հիւսկէնք:

Տէ. կենսաճիւթ. քաւսիտը կը հաստատէ ոսկորներուն եւ ակոսներուն մէջ: Ան կը շինուի մեր մարմինը կողմէ, արեւուն անդամանիչակագոյն ճառագայթներուն ազդեցութեան տակ:

Քա. կենսաճիւթ. ան կը նպաստէ արեան լերդացումին, այսինքն ան կը պայթարի արեւնահոսութեան դէմ:

ըջիջներուն մէջ:

- Մծուճը կը գտնուի միսներուն, հակիթներուն եւ բանջարեղէնի տեսակներուն մէջ: Ան անհրաժեշտ է ձգաններուն, ոսկորներուն եւ լաւ սննդաուձեան:

### Գ.- ՕԼԻԿՕ - ԷԼԷՄԵՆՏԵՐ

Այս էլիկո (յունարէն կը նշանակէ շատ պզտիկ) տարրերը շատ փոքր քանակով անհրաժեշտ նիւթեր են:

- Երկաթը կը գտնուի տուրմիս, լեարդին, պտուղներուն եւ չոր կամ կանաչ բանջարեղէններուն մէջ: Առանց անոր, անկարելի է շինել արեան կարմիր գնդիկները:

Յիշե՛ք նաեւ իոտը, զինկը, պղինձը, ֆլուորը, մանկանէզը, քոպալթը եւ քրոմը:

### ԳԻՏԵԻՐ, ԹԷ...

- Մեր մարմինը չի գիտեր կենսաճիւթեր շինել, ան ստիպուած է զանազան առնել մեր սպառած ուտելիքներէն:

- Ոչ մէկ ուտելիք բոլոր շինանիւթերը կը պարունակէ: Ետեւաբար ցանկացէ՛ք ինչ որ ուտելու կը կերպով:

### Ա.- ԿԵՆՍԱՆԻԹԵՐԸ

Գոյուձիւն ունին 13 տարբեր կենսաճիւթեր: Ահա անոնց անոնցմէ ինչ կարեւորները:

Ա. կենսաճիւթ. կը նպաստէ տեսողութեան եւ մորթի տեսողութեան:

Պե. կենսաճիւթ. անհրաժեշտ է շրջանի դրուձեան:

Սե. կենսաճիւթ. անհրաժեշտ է պատկանուելու համար մանրէներէն եւ շինելու համար մեր

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՐԳԱՅՈՒՄ

- 1) 1863ին ո՞ր քաղաքը առաջին անգամ իր մեթորոյին բացուած կատարեց. Ա.- Փարիզ
- 2) Կատուն ի՞նչպէս կը փոխադրէ իր ձագերը. Ա.- Իր կռնակին վրայ
- 3) Ե՞րբ հնարուեցաւ գնդիկ ծայրով չոր մեկանով գրելը. Ա.- 1900ին
- 4) Ո՞ր ցամաքամասին վրայ կ'ապրին վագրերը. Ա.- Ասիա
- 5) Ե՞րբ յայտնուեցան առաջին մարդ արարածները. Ա.- 6 հազար տարի առաջ
- 6) Ո՞ր ծովը գոյուձիւն ունի. Ա.- Սեւ ծովը
- 7) Մառի մը տարիքը գիտնալու համար «Կը կարդանք» անոր կոճղին նշանակները: Մէկ շրջանակ հաւասար է ծառին կանաքէն.

- 1) 1 տարուան
- 2 տարուան
- 3 տարուան
- 8) Գանի՞ ողնէ կազմը ւած է ողնայարը. Ա.- 22
- 9) Ո՞ր քանդակագործը շինեց Նիւ Եորքի Ազատութեան արձանը. Ա.- Պարթոլտի
- 10) Որո՞նք հնարեցին կողմնացոյցի սկզբունքը. Ա.- Եգիպտացիները
- 11) Գանի՞ քիւ խոտ կ'ուտէ փիղը օրական. Ա.- 50 քիւ
- 12) Ո՞րն է Իրլանտայի մայրաքաղաքը. Ա.- Պելֆաթ
- 13) Ո՞ր թուականին գտնուեցաւ Ամերիկան. Ա.- 1492
- 14) Անգլիայէն գատ ո՞ր երկրին մէջ ինքնաշարժները ձախ կողմէն կ'ընթանան. Ա.- Մալթա

- 15) Գանի՞ երկվայր-կեանի հաւասար է մէկ օրը. Ա.- 43,200
- 16) Ո՞ր երաժշտահարը յորինած է «Քարմէն»ը. Ա.- Պրահմա
- 17) Հնդկական ռնգեղ-չիւրը ի՞նչպէս կը տարբերուի ռնգեղիւրէն. Ա.- Ան միայն մէկ եղ-չիւր ունի
- 18) Ի՞նչ յաճախակա-նութեամբ տեղի կ'ունենայ ֆուլթպոլի աշխարհի ախոյեանութիւնը՝ Մոնտիալը. Ա.- Ամէն տարի
- 19) Մալթայի ուսուցիչ-գիտնալու աշխարհի ամէնէն մեծ ծաղիկն է. Ա.- Անուր հասակը կրնայ ըլլալ...
- 20) Ի՞նչ հնարեց անգլիացի ծոն Ուալթը 1830 թուականին. Ա.- Ուոքին

## ԻՆՉ ՈՒՏԵՆՔ

- ՍՈՒ

Այս բանջարեղէնը հազարամեակներէ ի վեր կը համեմէ մեր ուտելիքները: Հոս, եփած, ջարդուած, միջուկ դարձած սոխը կը գտնուի աշխարհի բոլոր խոհանոցներուն մէջ:

Սոխը կը պարունակէ հանքային նիւթեր եւ կենսաճիւթեր, յատկապէս՝ կենսաճիւթ: Սակայն ան ունի նաեւ բազմաթիւ բժշկական յատկութիւններ. զայն կը գործածեն պայթարելու համար մանրէներու, կրիփի, փորքը չուրի եւ յօդացաւերու դէմ:

Եթէ կ'ուզես սոխը կեղուել առանց լալու, զայն կեղուէ եւ կտրէ ծորակէն հոսող ջուրին տակ: Այս ձեւով արցունք յառաջացնող սոխէն ելլող նիւթը պիտի ձուլուի ջուրին մէջ:



### ՕԳԻՄԵՆՏԻՐ, ԲԵ ԵԳԻՍՏԱԳԻՆԵՐԸ ԻՐԵՆՑ ԿԱՏՈՒԱԾՆԵՐՈՒՆ ՍՈՒ ԿՐ ԸՈՒՐԻՐԻՆ:

- ԳԵՆԱՆՆԵՐ

Գետնախնձորը աւելի քան 5000 տարիներէ ի վեր կը մշակուի Հարաւային Ամերիկայի Անտեան լեռներու շրջանին մէջ: Սպանացիները զայն իրենց հետ բերին Եւրոպա եւ ծանօթացուցին Հին Աշխարհին: Ճգմուած, տապուած, խաշած, տարբեր թացաններով եփած այս բանջարեղէնը միջազգային յաղորութիւնը կը գտնէ:

Գետնախնձորը մեզի կը հայթայթէ Սէ. կենսաճիւթ եւ փոթասիտ:

Շնորհիւ իր մէջ պարունակած եւ մեր մարմինը կողմէ դիւրին իւրացուող նշային՝ ան մեզի կու տայ նաեւ ուժ: Այս իր յատկութիւններուն պատճառով է, որ ան կը կոչուէր «արքայի հացը», երբ հին ժամանակներուն ցորենի պակաս կար:

Կեղուելու ժամանակ, անմիջապէս գետնախնձորը կը սեւնայ: Հետեւաբար պէտք է զայն անմիջապէս ջուրին մէջ դնել:



### ՕԳԻՄԵՆՏԻՐ, ԲԵ ԳԵՏՈՒՄԱԽՆՁՈՐԸ ԼՈՅՐ չԻ ՍԻՐԵՐ: ԱՆ ԿՐ ԿԱՏՈՒԱԾՆԱՅ ԵՒ ԼԵՂԻ ԿՐ ԴՈՒՄՈՒՅ: ԵՏԵՆԱԲԱՐ ԿՐ ԵՒ ԳՅՈՒՆ ԿՐ ԵՒ ԸՈՒՐ ԿՅՈՒՐԻ ՄՐ ԵՄԷ:


- ԱՆԱՆԱՍ

Շնորհիւ պահածոյի տուփերուն եւ սառնարաններուն, մենք այս դիւրաբեկ եւ համեղ արեւադարձային պտուղը կրնանք ուտել օրեւէ մէկ եղանակի:

Անանասը կը պարունակէ տարօրինակ նիւթ մը, պրոմելինը: Այս նիւթը կը կակուղցնէ միսը, «կը կտրէ» կաթը, եւ պնակին մէջ իրեն հետ դրուած միւս պտուղները կը թուլցնէ:

Անանասը կը բուսնի պզտիկ թուփի մը վրայ, որ ամէն անգամ մէկ պտուղ կու տայ:

ՕԳԻՄԵՆՏԻՐ, ԲԵ ԿՐ ԿԱՏՈՒԱԾՆԱՅ ԵՒ «ԵՄԱՆ» ԲԱՆԵՆ, ՈՐ ՓԱՐԱԿՈՒՄԻ ԿՈՒԱՐԱՆԻ ԻՆՏԵՂԵՆՆԵՐՈՒ ԼԵՂՈՒՎ ԿՐ ԸՂԱՆԱԿԵ «ԱՆՈՒՆ ԻՆՏԵՂԵՆՆԵՐ»:



### ԵՆՄԻՆԻՆ ՄԷՋ ԻՍԿԱՊԷՍ ԸՍՏ ԵՐԿԱԹ ԿԱՅ

... Ո՞չ անպայման:

Եթէ կ'ուզես երկաթով հարուստ ուտելիքներ համտեսել, նախընտրէ՛ք միսը, ձուկը կամ քաքսոն: Բանջարեղէններուն մէջ քիչ քանակով երկաթ կայ: Աւելին՝ մարմինը զայն լաւ չի ծծեր, այսինքն՝ ան մարմնիդ մէջ երկաթ չի մնար:

«Երկաթով հարուստ» չոմիսին «տիտղոսը» յառաջացած է... տպագրական սխալէ մը: Ամերիկացի գիտնականի մը քարտուղարուհին չոմիսի տերեւի մը քննութեան մը տեղեկութիւնները տպելու ընթացքին գրած է 30 մկ. երկաթ... 3 մկ. փոխարէն:

Պորնէօ կղզիին անտառներուն աւելի քան 80 առ հարիւրը արդէն անհետացած է մտաւորապէս 25 տարիներու ընթացքին: Ի՞նչպէս կարելի է նման երեւոյթի մը դարձանք գտնել: Ամուսնութեամբ մը: Մարտ միսին սկսեալ Պանթարմասին քաղաքին մէջ բոլոր ամուսնացող զոյգերը պէտք է քաղաքապետարան ներկայանան իրենց հետ փոքր ծառ մը բերելով:

Մէկ ամուսնու ընթացքին 3566 ծառեր տնկուած են:

ՈՒԱԼՏՕ ՄԸՔ ՊԸՐՆԻ 40 երկվայրկեանէն վաղ քով կտրած է... 100 մեթր: Վստահաբար դուք աւելի լաւ ժամանակ պիտի արձանագրես: Այս ձեւով, այս ամերիկացի իր մասնակցած վազքի մրցումին վերջինը ելած է: Եւ ասիկա ինքնին մեծ յաղթանակ մը կը նկատուի, որովհետեւ Ուալտո... 100 տարեկան է:


ՏՐԱՆՍԱՍԻ Լիոն քաղաքին մէջ գիտնականներ կրցած են ակոսներ «բուսցնել» հաւերու բերաններուն մէջ:

Այս գիտնականները կը մտածեն, թէ կարելի է օր մը դարձեալ իրենց ակոսները կորսնցուցած անձերուն ակոսները «բուսցնել»: Մինչեւ որ այս ծրագիրը իրականանայ, անոնք «կը մարգոլին» հաւերուն քնացած յիշողութիւնը արթնցնելով:

Հոյսմողջներուն ժամանակաշրջանին ապրող հաւերուն նախահայրերը ակոսներով օժտուած սողուններ էին: Ժամանակի ընթացքին այդ ակոսները անօգուտ դարձան եւ հաւերը «մոռցած» են ինչպէս գանոնք «շինել»:



## ԺԱՄԱՆՅ



Կրնա՞ս օգնել մուկերուն՝ պանիրին հասնելու համար: Անոնք պետք է հետեւին 8 տախտակին պատկանող բիւրրուն:



Կրնա՞ս գտնել պատկերին համապատասխանող շուրջ:



Կրնա՞ս գտնել պատկերներուն ձիշ շարքը՝ հասկնալու համար պատահածը:

### Պատրաստե՛ք՝ ՇՈՂԻԿ ՏԵՐ ԴՈՒԿԱՍԵԱՆ

### ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազգակ» մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցիլ գիրով (հաստատութեան պարագային՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազգակ» ծանուցումներու գրասենյակը:





